



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 20384 «15» 11 2018 թ.

## ԵՊՀ ԾԱՂԿԱԾՈՐԻ «ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՈՒՍՈՒՄՆԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՏՈՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑԿՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ Ծաղկածորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում ամանորյա տոների ընթացքում մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով ԵՊՀ արհեստակցական կազմակերպության առաջարկությունը աշխատողներին ու նրանց ընտանիքի անդամներին տրամադրվող ուղեգրերի արժեքը նվազեցնելու մասին և առաջնորդվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով, ԵՊՀ կոլեկտիվ պայմանագրի 7-րդ բաժնի դրույթներով.

### հ ր ա մ ա յ ու մ ե մ .

1. 2018 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև 2019 թվականի հունվարի 6-ը ԵՊՀ Ծաղկածորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում ամանորյա տոների ընթացքում աշխատողների և նրանց ընտանիքի անդամների հանգստի կազմակերպման համար սահմանել ամանորյա փաթեթ՝ համաձայն հավելված 1-ի:

2. ԵՊՀ ֆակուլտետներին, ինստիտուտներին ու գիտակրթական կենտրոններին տրամադրվող ուղեգրերի չափաբաժինների բաշխումն իրականացնել հավելված 2-ով սահմանված կարգով:

3. Ուղեգրերի բաշխումն ու տրամադրումն իրականացնել ԵՊՀ արհեստակցական կազմակերպության միջոցով:

4. Հանձնարարել ԵՊՀ գլխավոր հաշվապահին՝ աշխատողներին տրամադրել ուղեգրերի արժեքի փոխանցման հաշիվներ և ապահովել վճարումների հաշվառումը:

5. Հանձնարարել ԵՊՀ Ծաղկածորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայի տնօրենին՝ ապահովել ուսումնաարտադրական բազա մեկնած աշխատողների և նրանց ընտանիքի անդամների հանգստի կազմակերպումը և ամանորյա փաթեթների շրջանակներում նախատեսված ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցումը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ Ա.Ավետիսյանին (համաձայնությամբ):

7. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 2016թ. նոյեմբերի 10-ի թիվ 205Տ13 հրամանը:

8. Սույն հրամանի մասին պատշաճ տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

9. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում ամանորյա տոների ընթացքում աշխատողների և նրանց ընտանիքի անդամների հանգստի անցկացման համար առաջարկվող ամանորյա փաթեթի նկարագրությունը և փաթեթի ուղեգրի արժեքը

#### Փաթեթի ուղեգրերի հաշվարկ

1. Փաթեթի տևողությունը՝ 7 օր, 6 գիշեր,
2. Փաթեթի ժամկետը՝ 31.12.2018 - 06.01.2019<sup>1</sup>,
3. Փաթեթի ուղեգրի արժեքը մեկ անձի համար՝ 80.000 դրամ,
4. Փաթեթի ուղեգրի արժեքը 3-12 տարեկան մեկ երեխայի<sup>2</sup> համար՝ 40.000 դրամ,
5. Փաթեթի ուղեգրի արժեքը մինչև 3 տարեկան մեկ երեխայի<sup>2</sup> համար՝ անվճար, առանց լրացուցիչ տեղ (ծալովի մահճակալ) տրամադրելու,
6. Լրացուցիչ տեղ (ծալովի մահճակալ<sup>3</sup>) տրամադրելու դեպքում՝ 70.000 դրամ:
7. Լրացուցիչ տեղ (ծալովի մահճակալ<sup>3</sup>) 3-12 տարեկան երեխայի<sup>2</sup> համար՝ 30.000 դրամ:

#### Փաթեթում ներառված ծառայություններ

1. Տեղավորում հյուրանոցային համարում,
2. Երեքանգամյա սնունդ,
3. Անվճար WiFi,
4. Ամանորյա միջոցառում՝ տոնական ընթրիք:

<sup>1</sup> Փաթեթը չի բաժանվում ըստ օրերի և ծառայությունների: Ուշ ժամանելու կամ շուտ հետ վերադառնալու դեպքում չօգտագործված օրերի գումարը հետ չի վերադարձվում:

<sup>2</sup> Անհրաժեշտ է ներկայացնել երեխայի ծննդյան վկայականի պատճենը:

<sup>3</sup> Լրացուցիչ տեղ (ծալովի մահճակալ) տրամադրվում է միայն սենյակներում համապատասխան թվով մահճակալ չլինելու դեպքում:

**ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում ամանորյա տոների ընթացքում ուղեգրերի տրամադրման չափաքանակները՝ ըստ համամասնություն**

ԵՊՀ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում ամանորյա փաթեթի ուղեգրերի տրամադրումը սահմանել ըստ ԵՊՀ ֆակուլտետների, ինստիտուտների և գիտակրթական կենտրոնների հիմնական աշխատողների թվաքանակի հետևյալ համամասնությամբ՝

1. մինչև 20 աշխատող՝ - 2 անձի համար,
2. 21-50 աշխատող՝ - 4 անձի համար,
3. 51-100 աշխատող՝ - 8 անձի համար,
4. 101-150 աշխատող՝ - 10 անձի համար,
5. 151-200 աշխատող՝ - 12 անձի համար,
6. 201 և ավելի աշխատող՝ - 14 անձի համար:

ԵՊՀ ֆակուլտետների, ինստիտուտների և գիտակրթական կենտրոնների աշխատողների կողմից սահմանված քանակի ուղեգրերը չօգտագործելու դեպքում դրանք տրամադրվում են ԵՊՀ վարչական, ինժեներատեխնիկական և արտադրական ստորաբաժանումների աշխատողներին: